

ՆՈՐԻՑ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՌԱՋԻՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԱՍԻՆ

ՄՈՒՐԱԴ ՕՂԱՆՅԱՆ

Վերջին շրջանում հազվադեպ դարձած խորենացիագիտական ուսումնասիրությունների շարքում իր խորությամբ առանձնանում է Արամ Թոփչյանի «Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը» աշխատությունը: Այն հեթեթական անգամ հաստատում է, թե որքան լայն է պատմագիտական իմացությունը, այնքան բարձր է գնահատվում Խորենացու Պատմության աղբյուրագիտական արժեքը: Ընդհանուր առմամբ դրական գնահատական տալով այս ուսումնասիրությանը, ուզում ենք անդրադառնալ մի առանցքային հարցի, որը հաշվի առնելու դեպքում, կարծում ենք, Ա. Թոփչյանը կարող էր շատ ավելի խորանալ իր արծարծած թեմայի մեջ և հանգել շատ ավելի որոշակի լուծումների: Կարծում ենք այս անդրադարձը օգտակար կլինի նույն ուղղությամբ նրա շատ ավելի «լայն ծրագրի»¹ իրագործման հարցում:

Խորենացու Պատմության ընդհանուր վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել նրա գլխավոր շեղումների հիմնապատճառը: Դա Աքեմենյաններին վերաբերող աղբյուրները Պարթևներին վերագրելն ու նրանց պատմությանը հարմարեցնելն է: Ինչպես սեղմ բնորոշում է Գ. Սարգսյանը, «Աքեմենյանները Խորենացու մոտ ժամանակագրական առումով դարձել են պարթև Արշակունիներ»²: Հիմնաշեղման ու դրա գրգապատճառի պարզաբանման շնորհիվ հնարավոր է գառնում ոչ միայն պարզել, թե ինչու է Խորենացին սխալվել, այլև համարյա մեկ առ մեկ բացահայտել, թե ո՞ր տեղերում է նա սխալվել, ինչն ինչի՞ հետ է շփոթել և ի՞նչ ժամանակներ կամ ի՞նչ պատմական անձնավորություններ են թաքնված նրա աղավաղված, աւեղծվածային ու անմեկնաբանելի համարվող պատմություններում կամ կերպարներում: Այս ճշգրտումները կատարելուց հետո, անկասկած, անհամեմատ ավելի հեշտ կլինի բացահայտել Խորենացու օգտագործած աղբյուրները և ընդհանրապես նրա Պատմության հետ առնչվող որևէ այլ հարց: «Մար Աբասյան աղբյուրի ծագումը և Մովսես Խորենացու Հայոց պատմությունը» վերնագրով հոգվածում մենք ամփոփ անդրագրածել ենք այս հարցերին³: Ա. Թոփչյանը հայտնում է, որ Մար Աբասի ժամանակի վերաբերյալ իրեն «ծանոթ է նաև վերջերս հայտնված» մեր տեսակետը⁴: Բայց, ցավոք, նրան այս տվյալից բացի ուրիշ բան չի հետաքրքրել և նա

1 Ա. Թոփչյան. Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը. Երևան, 2001, էջ 5:

2 Գ. Սարգսյան. Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. Երևան, 1966, էջ 121, 200:

3 Մ. Օհանյան. Մար Աբասյան աղբյուրի ծագումը և Մովսես Խորենացու Հայոց պատմությունը. — «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1996, №1-2, էջ 295-310:

4 Ա. Թոփչյան. նշվ. աշխ., էջ 60, ծանոթ. 128:

չի նկատել հողվածում պարզաբանված մի շարք այնպիսի առանցքային հարցեր, որոնց լուծումը ինքը չգտնելով, դրանց վերաբերյալ ոչ ճիշտ մեկնաբանություններ է արել: Խոսքն առաջին հերթին վերաբերում է Խորենացու Առաջին Արտաշեսի⁵ կերպարի և այն ստեղծելու հիմք հանդիսացած աղբյուրների բացահայտմանը: Սա Խորենացու այն կերպարներից է, որը նրա հիմնաչեղման բացահայտումով վերծանվում է ուղղակի բառ առ բառ: Դրան անդրադարձել ենք վերոհիշյալ հողվածում: Առավել մանրամասն անդրադառնանք այս կերպարին: Դա կարևորում ենք այն առումով, որ Առաջին Արտաշեսի կերպարի բացահայտման շնորհիվ շատ ավելի ակնհայտ են դառնում Խորենացու աշխատանքային հիմնական սկզբունքները և բացվում նրա Պատմությունը վերծանելու նոր ուղիներ:

Հ. Մանանդյանը Առաջին Արտաշեսի կերպարում տեսնում է Տիգրան Մեծի դիխավոր դաշնակից Միհրդատ Պոնտացուն⁶: Ս. Մալխասյանը վստահ էր, որ «գոյություն չունեցող» Առաջին Արտաշեսին վերագրված դործերը իրականում վերաբերում են Կյուրոս Մեծին, Քսերքսեսին, Տիգրան Մեծին և Միհրդատ Պոնտացուն, այս կերպարը համարելով պատմական կամ ժողովրդական «Հիշողությունների մի խառնուրդ»⁷: Ա. Թոփչյանը Առաջին Արտաշեսին վերաբերող պատմությունը դիտելով սոսկ որպես «պատմական իրականության արձագանք»⁸, ուղղակիորեն ողջ առաջավորասիական տարածաշրջանն ընդգրկող և «բոլոր արևմուտքին» առնչվող նրա դործունեությունը տեղայնացրել է Հայաստանում և նույնացրել սլավոնական Արտաշես I-ի պատմությունը⁹:

Նման նույնացումները բոլոր առումներով հիմնավորելու անհրաժեշտություն ունեն: Պատմաճայրը կամայական, սոսկ արտաքին նմանությունների վրա հիմնվելով չի ստեղծել այս և մյուս կերպարները: Դա ունի շատ ավելի խոր դրդապատճառներ:

Ժամանակագրական մեծ շեղումներից և հիմնականում դրանից բխող ազավազումներից անկախ, Խորենացին պահպանել է համեմատաբար ճիշտ ժամանակահամեմատություն: Նրա ժամանակագրական ցուցումներով՝ Առաջին Արտաշեսը թագավորել է Երկրորդ Արտաշեսից մոտ 170 տարի առաջ¹⁰: Երկրորդ Արտաշեսը համապատասխանում է պատմական Արտաշես I-ին (մ.թ.ա. մոտ 201 (ստրատեգ)-189-160)¹¹, որից մոտ 170 տարի առաջ Հայաստանում իշխում էր Կողոմանոսը (մ.թ.ա. մոտ 360-337)¹², որը հե-

5 Խորենացին իր առաջին Արտաշեսին կոչում է «Արտաշիսի առաջնոյ» կամ «ղառաջնոյն Արտաշիսի» տարբերակներով, ինչին հետևելով այստեղ օգտագործվում է «Առաջին Արտաշես» անվանաձևը, խուսափելու համար այլ Արտաշեսների հետ շփոթից: Նույն նպատակն է հետապնդում Խորենացու մյուս Արտաշեսին ստորև տրվող «Երկրորդ Արաշես» կոչումը:

6 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Հ. Ա, Երևան, 1940, էջ 145-147:

7 Մ. Խ ո ռ ե ն ա յ ի. Հայոց Պատմություն. Երևան, 1990, էջ XXXIV-XXXVI, 263, ծանոթ. 117 (բոլոր ընդգծումները մերն են - Մ. Օ.):

8 Ա. Թ ո փ չ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 102:

9 Նույն տեղում, էջ 101-110:

10 Խորենացու ժամանակագրության մանրամասն վերլուծությունը տե՛ս Գ. Ս ա ր գ ս - յ ա ն. Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» ժամանակագրական համակարգը. Երևան, 1965:

11 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. Հ. 1, Երևան, 1970, էջ 527-528:

12 Նույն տեղում, էջ 922:

աադայում Դարեհ III անունով դարձավ Աքեմենյան տերության թագավոր (մ.թ.ա. 336–330): Խորենացու և Հունահռոմեական աղբյուրների տվյալների համեմատությունից միանգամայն ակնհայտ է դառնում, որ Առաջին Արտաշեսի կերպարի տակ իրականում թաքնված է հենց ինքը՝ նախապես Հայաստանի տիրակալ, հետագայում Աքեմենյան տերության վերջին թագավոր Դարեհ III Կողմանոսը:

Խորենացին Առաջին Արտաշեսին նվիրել է 3 գլուխ¹³: Դրանցից վերջին՝ ԺԳ գլուխը և դրան նախորդող ԺԲ գլխի առաջին պարբերությունը անվիճելիորեն հիմնականում վերաբերում են Աքեմենյան տիրապետության հիմնադիր, Լյուդիան գրաված և Կրեսոսին ձերբակալած Կյուրոս Մեծին (մ.թ.ա. 550–538): ԺԱ գլխից մի դրվագ վերաբերում է Արտաշեսի որդի Տիգրան Միջինին և Հայաստանի ներքին կյանքին (Վարաթին, Դատին, Գառնիկին առնչվող): Այս գլխից մեկ այլ հատված Արտաշեսի գործունեությանը ընդհանրապես չի վերաբերում և Ը գլխի տվյալների կրկնություն է (Դարեհին, Մակեդոնացուն և Միհրդատին առնչվող): Իսկ անմիջապես Արտաշեսին վերաբերող մյուս հատվածների բովանդակությունն այսպիսին է.

Գլուխ ԺԱ. «Մեր Արտաշես Առաջինի մասին և նախագահությունը (պարսիկներից) հափշտակելու մասին

Արտաշեսն իր հոր Արշակի փոխանակ թագավորում է Հայոց վրա Պարսից Արշական թագավորի քսան և չորսերորդ տարում, և առաջադեմ լինելով, չի կամենում երկրորդական գահը գրավել, այլ ձգտում է ավադություն, Արշականը համաձայնելով՝ տալիս է նրան նախագահությունը: Որովհետև (Արտաշեսը) հպարտ և պատերազմասեր մարդ էր, որ և Պարսկաստանում արքունի (պալատ) շինեց իրեն համար և առանձին դրամ կտրել տվեց, իր պատկերով, և Արշականին իր ձեռքի տակ թագավոր դրեց Պարսկաստանի վրա, ինչպես և իր որդի Տիգրանին՝ Հայոց վրա: ... Բայց իր Արտաշամա ղուստրը կնություն է տալիս ոմն Միհրդատի, Վրաց մեծ բղեշխի, որ Դարեհի նախարար Միհրդատի ղավակներից էր...»:

Գլուխ ԺԲ. «Բայց Արտաշեսը երկու ծովերի միջև եղած ցամաքը նվաճելով, օվկիանոսը լցնում է նավերի բազմությունը, կամենալով բոլոր արևմուտքն իրեն հպատակեցնել, որովհետև Հուսումն մեծ խռովություն և շփոթություն լինելով՝ ոչ ոք նրան ուժեղ ղիմազրություն ցույց չտվեց: Բայց չեմ կարող ասել, ինչ բանի աղբեցությունը, ահագին աղմուկ և շփոթություն է ծագում, և բազմաթիվ զորքերն սկսում են միմյանց կոտորել. իսկ Արտաշեսը փախչելիս մեռնում է, ինչպես ասում են՝ իր զորքերից, քսան և հինգ տարի թագավորելով»:

Գլուխ ԺԳ. «Ավաղ բախտին. ղոնե իր սերունդյան մեջ լինե՞ր վախճանված և ոչ թե փախուստի ժամանակ: ... Իսկ սա մեծամեծ հաղթանակներով վառավորվելուց հետո իր զորքերից խողխողվում է»:

13 Մ. Խորենացի. Հայոց Պատմություն. II, ԺԱ, ԺԲ, ԺԳ, Երևան, 1981, էջ 136–144: Խորենացուց հաջորդ հղումները՝ այս հրատարակությունից:

Առաջին Արտաշեսին վերագրված այս ավյալները գրվագ առ գրվագ համադրենք Դարեհ III-ի հունահռոմեական աղբյուրներից հայտնի գործունեությունը.

Դրվագ 1. «Արտաշեսը ... թագավորում է Հայոց վրա..., չի կամենում երկրորդական դաճը գրավել, ... Արշականը համաձայնելով՝ տալիս է նրան նստադահլուծությունը...»: [«Արտաշես թագաւորէ Հայոց ... ոչ զերկրորդական ունի գահ, ... որում հաւանեսլ, յանձն առնու Արշական տալ նմա զնախագահութիւնն»]:

Սա համապատասխանում է Պոմպեոս Տրոգոսի վկայությունը (Հուստինոս. X, 3) Դարեհ III-ի վերաբերյալ, ըստ որի վերջինս Հայաստանի տիրակալ լինելուց հետո է նվաճում Աքեմենյան ողջ տերությունը գերագահությունը¹⁴: Իհարկե Դարեհին գերագույն գահը կամավոր չէր զիջվել, ինչպես ասում է Խորենացին Արտաշեսի վերաբերյալ: Արիանոսի համաձայն, Մակեդոնացու Դարեհին ուղղված նամակում այդ մասին ասվում է հետևյալը. «Դու Բաբելոնի օգնությունը սպանեցիր Արսեսին և խլեցիր իշխանությունը անարդարացիորեն»¹⁵: Բայց Խորենացին այս գլխի վերնագրում ունի Արտաշեսի կողմից գերագահության հասնելու նաև Արիանոսի վկայությունը համակնող տարբերակը. «յափշտակելոյ զնախագահութիւնն», ինչը կրկնում է ժԹ գլխում «հանելով ի նոցանէ զնախագահութիւնն»:

Դրվագ 2. «Արտաշեսը ... թագավորում է Հայոց վրա Պարսից Արշական թագավորի քսան և չորսերորդ տարում»: [«Արտաշես թագաւորէ Հայոց ... ի քսան և ի չորրորդ ամի Արշականայ Պարսից արքայի»]:

Սա համապատասխանում է Դարեհ III-ին, որը գահ է բարձրացել իրեն Հայաստանի իշխանությունը պարգևած Արտաքսերքսես III-ի (մ.թ.ա. 359-338) հենց 24-րդ տարում՝ մ.թ.ա. 336 թ.: Սակայն սա վերաբերում է Դարեհի ոչ թե Հայաստանի իշխանությանը, այլ Աքեմենյան գերագահությանը տիրելու տարեթվին:

Դրվագ 3. «Իր ... դուստրը կնություն է տալիս ոմն Միհրդատի...»: [Զուստր իւր ... տայ կին Միհրդատայ...]:

Հունահռոմեական աղբյուրների համաձայն՝ Դարեհ Վերջինն իսկապես առնչություն ուներ Միհրդատ անունով անձնավորության հետ, որն Արիանոսի համաձայն, իսկապես նրա փեսան էր¹⁶: Սա նույն անունով հայտնի է նաև Խորենացուն¹⁷: Բայց քանի որ, ըստ Պատմաճոր, Դարեհն ու Առաջին Արտաշեսը տարածամանակ հանդես եկած տարբեր անձեր են, այդ պատճառով նա ստեղծել է «Միհրդատ» անունով երկու կերպար, որոնցից

14 A. M. Д а н д а м а е в. Политическая история Ахеменидской державы. М., 1985, с. 249.

15 Ա Ր Ի Ա Ն Ո Ս, II, 14(5), էջ 72: Արիանոսի «Ալեքսանդրի արշավանքը» և Կուրցիոս Ռուփոսի «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը» աշխատությունները հայերեն հրատարակված են մեկ գրքով (Թարգմանությունը ռուսերենից՝ Ա. Արգսյան, Խ. Մալխասկայան, Երևան, 1987), որից ե կատարված են այս հեղինակներին վերաբերող հղումները:

16 Ա Ր Ի Ա Ն Ո Ս, I, 15 (7), 16 (3), էջ 32, 33: Պ Լ Ո Ւ Մ Ա Ր Ք Ո Ս. Ալեքսանդրի ճակատագրի և արիության մասին, ճառ 1, մաս 2, Երևան, 1983, էջ 468, ռուսերենից թարգմանությունը Հ. Հարյանի (Պուլտարքոսից հաջորդ հղումները՝ սույն հրատարակությունից): Պատմություն Ալեքսանդրի Մակեդոնացու. Հեղինակի սլավոնական անունը «Կեղծ-Կալիսթենես» (հայկական խմբագրություններ, աշխատասիրությունը Հ. Սիմոնյանի), Երևան 1989, էջ 207, 216, 399, 401:

17 Ն Ո Ր Ե Ն Ա Յ Ի, II, Ը, ԺԱ, էջ 128, 138:

մեկը Պարսից Դարեհի նախարարն է, իսկ մյուսը՝ սրա շառավիղը և Հայոց Առաջին Արտաշեսի փեսան:

Դրվագ 4. «Հռոմում մեծ խռովություն և շփոթություն...»: [*Մեծ յոյզք խռովութեանս եղեալ ի Հռովմ...*»]:

Դարեհի գահ բարձրանալու տարում՝ մ.թ.ա. 336 թ., սպանվել էր Մակեդոնիայի թագավոր Փիլիպոս II-ը, ինչից հետո հելլենական աշխարհում (ի Հռովմ) իսկապես մեծ խռովություն ու հուզումներ էին սկսվել: Ապստամբել էին հունական երկրներն ու Թրակիան: Փիլիպոսին փոխարինած որդին՝ Ալեքսանդրը, կարողացավ ճնշել այդ ապստամբությունը շուրջ 2 տարի տևած պատերազմների ընթացքում¹⁸: Մակեդոնացուն նվիրված կեղծ-կալիսթենեսի Պատմության հայերեն միջնադարյան խմբագրություններին մեկուսի, Փիլիպոսի սպանությանը հետևած իրավիճակը բնորոշված է նույն կերպ «մեծ խռովութիւն»¹⁹:

Դրվագ 5. «Արտաշեսը երկու ծովերի միջև եղած ցամաքը նվաճելով, ... ոչ ոք նրան ուժեղ դիմադրություն ցույց չտվեց...»: [*«Արտաշիսի նուաճեալ զցամաքս միջոցած ծովուցն երկոցունց, ... ոչ ոք ընդդիմանայ նմա հզօրապէս»*]:

Ապստամբությունները ճնշելու համար Մակեդոնացին ստիպված ետ է կանչում իր զորքերը Փոքր Ասիայից և Դարեհ III-ի հույն զորավար Մեմնոնը իսկապես առանց «ուժեղ դիմադրության», համարյա ամբողջությամբ վերագրավում է այս երկրամասի ծայր արևմտյան, մինչ այդ մակեդոնացիների կողմից գրավված մասը²⁰: Այդպիսով Աքեմենյանները ամբողջությամբ կրկին իրենց են ենթարկում «երկու ծովերի միջև եղած ցամաքը», այսինքն Փոքր Ասիան:

Դրվագ 6. «Օվկիանոսը լցնում է նավերի բաղմունքով...»: [*«Լնու զՈվկիանոս բաղմունքեամբ նաւաց...»*]:

Արիանոսի համաձայն քեմենյան նավատորմը գերիշխում էր ոչ միայն սեփական ափերի մոտ, այլև ողջ էգեյան ծովում: Պատերազմի սկզբում Դարեհը ուներ 300 ռազմանավ, իսկ մակեդոնացիները՝ ընդամենը 160: Դա Ալեքսանդրին ստիպում է հրաժարվել ծովային ճակատամարտերից և ընդհանրապես ցրել իր նավատորմը²¹:

Դրվագ 7. «Կամենալով բոլոր արևմուտքն իրեն հպատակեցնել...»: [*«Ծառայեցուցանել կամելով զբոլոր արևմուտս...»*]:

Եթե Մակեդոնիայի գլխավորած հելլենական աշխարհը նպատակ էր հետապնդում նվաճել ողջ արևելքը, ապա Դարեհ III-ը իսկապես նպատակ ուներ զրավելու «բոլոր արևմուտքը», ինչպես վկայում է Խորենացին Առաջին Արտաշեսի վերաբերյալ: Դա են հաստատում Ռուֆոսի հետևյալ տողերը. «Մեծ թափ ընդունած պատերազմը, որը վարում էին Եվրոպայի ու

18 Արիանոս, I, 1-10, էջ 9-25: Պլուտարքոս. Համեմատական կենսագրություններ, Ալեքսանդր. XI, Դեմոսթենես. XXIII, էջ 54-55, 331:

19 Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացւոյ, էջ 119:

20 Դիոնիսիոս Միկիլիսցի. Պատմական զրադարան, XVII, 7(1-3), երևան, 1985, էջ 79: Այս հարցին վերաբերող ընդհանուր անդրադարձը տես Б. Г. Гафуров, Д. И. Ц и б у к и д и с. Александр Македонский и Восток. М., 1980, с. 79, 80, 107-109.

21 Արիանոս, I, 18(4-9), 20(1), II, 1-2, էջ 36-37, 39, 53-55:

Ասիայի ամենահզոր արքաները ամբողջ աշխարհին տիրանալու նպատակով»:

Գրանիկոսի պարտութիւններից հետո Դարեհը, թեև ուշացումով, իր նախնորմը մտցրեց էդեյան ծով և կղզիները գրավելով, ընդհուպ մոտեցավ մայրցամաքային Հունաստանին: Այս առաջխաղացումից լրջորեն անհանգստացած հույները սկսում են ռազմանավեր հավաքել պաշտպանելու ոչ միայն կղզիները, այլև ըստ Հունաստանը: Եթե թիկունքում Դարեհը ունենար նույն հաջողութիւնը, ապա արգեն ոչինչ չէր խանգարի իրեն ենթարկել «րոյր արևմուտքը»²²:

Դրվագ 8. «Ահապիւն աղմուկ և շփոթութիւն է ծագում, և բազմաթիւ զորքերն սկսում են միմյանց կոտորել...»: [«Ահապիւն իմն աղմուկ լեալ շփոթից և բազմութեան զորացն զմիմիեանս կոտորեալ...»]:

Ալեքսանդր Մակեդոնացուց մեկը մյուսի հետևից ջախջախիչ սլարտութիւններ կրող Դարեհի զորքերի մեջ իսկապես մեծ խուճապ ու շփոթ էր առաջացել: Արիանոսի համաձայն՝ Իսոսի ճակատամարտում խուճապահար փախչող աքեմենյան բանակը Կիլիկիայի նեղ կիրճերում «վախեցած ու անկարգ, ոչ այնքան տուժեցին հետապնդող թշնամուց, որքան իրար կոխկրտեցին»: Նման պատկեր է ներկայացնում նաև Դիոդորոսը. «Նրանք իրար վրա ընկնելով իրար էին կոխկրտում և շատերը սպանվեցին առանց պատերազմում վերք ստանալու: ... ոմանք էլ իրենց թրերը մերկացրած, ցած էին տապալում նրանց, ովքեր ընկնում էին նրանց վրա»: Արտաշեսին վերադարձած այս գրվագին ոչ միայն բովանդակութամբ, այլև ոճով շատ ավելի մոտ է Կեղծ-Կալիսթենեսի հայերեն տարբերակներում Իսոսի ճակատամարտի նկարագրութիւնը. «եւ խռովեալք ընդ միմեանս, անկեալք և խորտակեալք վասն բազմութեան զաւրացն, ... զի ինքեանք զիրեարս սպանանէին»²³:

Դրվագ 9. «Իսկ Արտաշեսը փախչելիս մեռնում է, ինչպես ասում են՝ իր զորքերից, ... սա մեծամեծ հաղթանակներով փառավորվելուց հետո իր զորքերից խողխողվում է...»: [«Իսկ Արտաշես փախուցեալ մեռանի, որպէս ասեն՝ յիւրոց զորացն, ... սա մեծամեծ յաղթանակօք պանծացեալ ի յիւրոց զօրացն խողխողի»]:

Այստեղ առկա է հունահռոմեական աղբյուրներում Դարեհ III-ին վերադարձած երեք յուրահատուկ մանրամասն. նա իսկապես սպանվում է փախուստի ժամանակ, իսկապես խողխողվում է, և իսկապես իր իսկ զորքերի, այսինքն՝ զինվորների կողմից: Այս դեպքում նույնպես ակնհայտ է ոճի ու բովանդակության համապատասխանութիւն Կեղծ-Կալիսթենեսի Պատմութիւնի հայերեն տարբերակների Դարեհի մահվանը վերաբերող հատվածների հետ. «Դարեհ վախուցեալ..., մեռաւ յիւրոց զաւրացն..., սրախողխող արին...»²⁴:

²² Ա Ր Ի Ա Ն Ո Ս, II, 1-2, էջ 53-55: Ռ Ո Ւ Փ Ո Ս, III, 1(19-21), IV, 1(19-21, 36-40) էջ 281, 315:

²³ Ա Ր Ի Ա Ն Ո Ս, III, 11(3), էջ 67: Դ Ի Ո Ղ Ո Ր Ո Ս Ս Ի Կ Ի Լ Ի Ա Յ Ի, XVII, 7-8, էջ 85: Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացու, էջ 157, 390:

²⁴ Ա Ր Ի Ա Ն Ո Ս, III, 21(10), էջ 116, Ռ Ո Ւ Փ Ո Ս, V, 13(16), էջ 404, Պ Ո Ւ Ս Տ Ա Ր Ք Ո Ս. Համեմատական կենսագրութիւններ, Ալեքսանդր. XLIII, էջ 89, Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացու, էջ 233-236, 411, 463: Ենթադրվում է, որ Կեղծ-Կալիս-

Դրվագ 10. «Ավա՛ղ բախտին. գոնե իր տերության մեջ լինեք վախճանված և ոչ թե փախուստի ժամանակ...»: [«Ավա՛ղ բախտին. միայն թէ տէրութեանն և ոչ ի փախստեան էր վախճանեալ...»]:

Հունահռոմեական ազբյուրները նման կարեկցանքով խոսում են ժամանակի ամենահզոր ու հարուստ երկրի տիրակալից իր իսկ երկրի մեջ փախստական դարձած և ի վերջո սպանված Դարեհ Վերջինի փոփոխական բախտի կամ ճակատագրի մասին: Այստեղ էլ ակնհայտ է ոճի ու բովանդակության համապատասխանությունը Կեղծ-Կալիսթենեսի Պատմության Դարեհի ճակատագրին վերաբերող հատվածների հետ. «Ավա՛ղ..., զայսքան մեծ թաղաւորս..., այժմ փախստական և մազապուրծ»²⁵:

Առաջին Արտաշեսին վերագրված ստորև ներկայացվող մյուս դրվագերը հունահռոմեական ազբյուրներում չեն հանդիպում Դարեհ III-ի վերաբերյալ, բայց դրանք միանգամայն վերագրելի են նրան:

Դրվագ 11. «Պարսկաստանում արքունի (պալատ) շինեց իրեն համար և առանձին դրամ կարել տվեց, իր պատկերով...»: [«Արքունիս իւր ի Պարսից աշխարհին շինեաց, և դրամ առանձին զիւր պատկերն հարկանէր...»]:

Պարսկաստանում նման կարգի գործունեություն ծավալելը եթե լիովին համատեղելի է Դարեհ III Կողոմանոսին, ապա ոչ մի կերպ չի համապատասխանում Հայաստանի որևէ այլ տիրակալի կամ թագավորի:

Դրվագ 12. «Արտաշեսը ... Արշականին իր ձեռքի տակ թագավոր դրեց Պարսկաստանի վրա, ինչպես և իր որդի Տիգրանին՝ Հայոց վրա...»: [«Արտաշէս ... զԱրշական ընդ իւրով ձեռամբ կացուցանէր թագաւոր Պարսից, որպէս զՏիգրան որդի իւր՝ Հայոց...»]:

Կառավարման նման կարգի վերաբերյալ՝ երբ գերագահ թագավորը այլ երկրների հետ թագավոր է նշանակել նաև իր բուն երկրում, վկայում է նաև Սեբեոսը. «Որդիք չորք ասեն լեալ Արշակայ արքայի Պարթևաց. գառաջինն ասեն թագաւորեցոյց Թետալացոց աշխարհին, զերկրորդն ի վերայ Կիլիկեցոց. զերրորդն ի վերայ Պարթևաց. զչորրորդն ի Հայաստան աշխարհին»²⁶:

Այս և հին ու միջնադարյան այլ տվյալների քննությունը հանգեցրել է նրան, որ սկսած Մարաստանի գերիշխանությունից մինչև Սասանյաններ ներառյալ, արիական ընդհանրության հիմքի վրա կազմավորվել է մի դաշնություն, որը գլխավորող երկրներն են եղել Մարաստանը, Պարսկաստանը, Հայաստանը, Հետագայում նաև սրանց միացած Պարթևքը²⁷: Հայ սլատմագրությունը սույն դաշնության վերաբերյալ ուղղակի ասում է, որ այն «սլարունակեալք է չորից ազգաց՝ Մարաց, Պարսից, Հայոց և Քոչանաց»²⁸: Այն գլխավորել է համարյա արքայից արքան, որն «իր ձեռքի տակ» թագավորներ է նշանակել դաշնության մեջ ընգրկված երկրների

թենեսի Պատմության թարգմանիչը խորենացին է, ինչով կարելի է բացատրել այս ոճական ընդհանրությունները:

25 Ա Ր Ի ա ն ո ս, III, 22, էջ 116–117: Ռ ու փ ո ս, IV, 1(1), (8–10), էջ 310, 366: Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացւոյ, էջ 228:

26 Ս ե բ ե ո ս. Պատմութիւն. Բ, Երևան, 1939, էջ 10:

27 Այս դաշնության մասին տես Մ. Օ հ ա ն յ ա ն. Հայաստանը հին աշխարհի երկրների դաշակարգում. – ՊԲՀ, 2001, № 2, էջ 207–235:

28 Անանուն Սեբաստացու տարեգրությունը. Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., կազմող՝ Վ. Հակոբյան. հ. 2, Երևան, 1956, էջ 121, 122:

վրա: Աքեմենյան շրջանում նման աշխարհակարգի գոյությունը հաստատում է տվյալ ժամանակների ամենաարժանահավատ պատմագիրներից մեկը՝ Քսենոփոնը (մոտ մ.թ.ա. 430–355): Ըստ նրա, կառավարման այս կարգերը հիմնել էր Կյուրոս Մեծը: Երբ նա ճանաչվում է «միասլետ», այսինքն գերազանց թագավոր, այլ երկրների թագավորների հետ նրա ենթակայության տակ էր նաև Պարսքի թագավորը, որը նրա հայրն էր՝ Կամբյուսեսը: Այսինքն, Կյուրոսը փաստորեն ոչ թե Պերսիա-Պարսկաստանի թագավորն էր, ինչպես ընդունված է հունահռոմեական աղբյուրներում, այլ համարիական արքայից արքան: Նրա «ձեռքի տակ» էր և՛ Պարսքի թագավորը, և՛ Մարաստանի թագավոր Աստիագեսը, և՛ հավանաբար Հայաստանի թագավոր դարձած Տիգրանը, որի հայրը (ըստ ինորենացու՝ Երվանդ Սակավակյացը) մինչ այդ ճանաչում էր Աստիագեսի գերազանցությունը: Սա նշանակում է, որ Պարսքի, Պարսկաստանի, Պարթևքի կամ ընդհանուր անվանումով՝ Իրանի թագավորների արքայացանկերին զուգահեռ, անհրաժեշտ է պատկերացնել նաև համարյա արքայից արքաների արքայացանկ: Ծիշտ է, հաճախ Իրանում իշխող թագավորը զուգահեռաբար եղել է նաև համարյա արքայից արքա: Բայց այդպես եղել է ոչ բոլոր դեպքերում: Օրինակ, Կյուրոս Մեծն ավելի երկար եղել է համարյա, քան թե Պարսքի թագավոր, քանի որ նա հոր մահից հետո միայն պետք է հռչակվեր նաև իր բուն երկրի թագավոր: Կամ ինորենացու ու Սեբեոսի նկատի առած համարյա արքայից արքաների օրոք, նրանց բուն երկրներում թագավորել են այլ արքաներ: Իսկ համարյա գերազանցությունը նվաճած Առաջին Արտաշեսը ընդհանրապես Իրանում չի թագավորել: Սա նշանակում է, որ համարյա արքայից արքաներն ու գրանց գահատարիները տարբերվում են Պարսկաստանի կամ Իրանի թագավորներից ու սրանց գահատարիներից: Բայց հունահռոմեական պատմագրությունը և հիմնականում դրանով ուղեկցվող ժամանակակից պատմագրությունը տարբերություն չեն տեսնում համարյա արքայից արքաների և սրանց բուն երկրների թագավորների միջև: Նրանք փաստորեն համարյա արքայից արքային դիտում են որպես միայն Պերսիա-Պարսկաստանի թագավոր: Ակնհայտ է, որ այս առումով շատ ավելի ճիշտ են ինորենացին և Հայ մյուս պատմագիրները, որոնք տարբերում են համարիական արքայից արքային Պարսկաստանի կամ Իրանի թագավորից: Հավանաբար նման մոտեցում են ունեցել նաև որոշ հունահռոմեական պատմագիրներ և հատկապես Ափրիկանոսը, որին ինորենացին ներկայացնում է որպես իր Պատմության այս հատվածի գլխավոր աղբյուր:

Քսենոփոնի հավաստմամբ, Կյուրոսի հաստատած կարգերը պահպանվում էին նաև իր ժամանակներում²⁹: Եթե կառավարման այս համակարգը ընդունված էր Դարեհ III-ի նախորդների կողմից և պահպանվել է նրանից հետո, ապա միանգամայն հնարավոր է, որ այն գոյություն է ունեցել նաև նրա օրոք: Հետևաբար այս դեպքում նույնպես ինորենացու կողմից Առաջին Արտաշեսին վերագրված կառավարման կարգերին վերաբերող սույն տվյալը միանգամայն վերագրելի է Դարեհ III-ին:

29 Ք ս ե ն փ ո ն. Կյուրոպեդիա, VIII, 1(4–7). Երևան, 2000, էջ 307–308, 350–353:

Առաջին Արտաշեսի վերաբերյալ Խորենացին ժԲ գլխում նաև հայտնում է, որ նա մի շարք աստվածների արձաններ Փոքր Ասիայից ու Հունաստանից փոխադրել է Հայաստան: Սա նույնպես, ինչպես Լյուդերիայի գրավումը, իսկապես կարող է լինել Կյուրոս Մեծին կամ Աքեմենյան այլ արքայի վերաբերող տվյալ, ինչպես ենթադրում է Ա. Թոփչյանը և մեջբերում այդ հետևությունը հանդեցնող վկայություններ արտաքին աղբյուրներից: Նրա հետ պետք է նաև համաձայնել, որ Խորենացին այս տեղեկությունն է «զուգակցել» հելլենիզմի շրջանում հունական հավատալիքներ Հայաստան ներմուծելու վերաբերյալ տվյալները³⁰: Բայց չի բացառվում, որ սա նույնպես Դարեհ Վերջինին վերաբերող տեղեկություն է, որը հենց ինքը, ինչպես իր նախորդները, կարող էր հունական աստվածների արձաններ ներմուծել:

Դարեհ III-ին և Խորենացու Առաջին Արտաշեսին առնչվող տվյալներում ակնհայտ են նաև անձնանվանական համապատասխանություններ: Ինչպես ասվեց, Դարեհ III-ից 24 տարի առաջ իշխած Թագավորի անունը Արտաքսերքսես է, իսկ Առաջին Արտաշեսից նույնքան տարի առաջ հանդես եկած Թագավորի անունը՝ Արշական: Դարեհ III-ի հոր անունը Արշամ է, Արտաշեսինը՝ Արշակ: Սա ենթադրել է տալիս, որ Խորենացին իր աղբյուրում հիշված արքեմենյան անունները որոշ դեպքերում փոխարինել է դրանց նման սլարթեական անուններով:

Անվանումների հարցում Խորենացու մոտեցումը պարզելուն օգնում է նաև հետևյալ կարևոր փաստարկը: Բաբելական աստղաբաշխական աղյուսակներում Դարեհ III-ի անունը հայտնի է նաև «Արտաշատ» տարբերակով³¹: Դա հավանաբար նույն «Արտակաշատու» անունն է, որը նույն աղբյուրում տրվում է հունահռոմեական աղբյուրներում «Արտաքսերքսես» կոչվող արքեմենյան Թագավորներին, որոնց հայկական աղբյուրներում համապատասխանում է «Արտաշես» անունը³²: Սա նշանակում է, որ Խորենացու կողմից Դարեհ III-ի կերպարի կրողին «Արտաշես» անունը տալը նույնպես կամայական չէ և, ինչպես նրա մյուս տվյալները, համապատասխանում է արտաքին աղբյուրներին: Հնարավոր է, որ Խորենացու տվյալ գլուխների գլխավոր աղբյուր Ափրիկանոսն է Դարեհ III-ին կոչել «Արտաշատ-Արտակաշատու-Արտաշես» կամ նման որևէ տարբերակով: Նա պաղեստինցի էր, ստեղծագործում էր Ալեքսանդրիայում և շատ հավանական է, որ ծանոթ էր բաբելական վերոհիշյալ տեքստերին, կամ դրա ազդեցությունը կրած այլ աղբյուրների, որոնցում Դարեհ III-ին տրվել է «Արտաշատ» կամ դրան նման անուն:

30 Ա. Թոփչյան. Նշվ. աշխ., էջ 105–108:

31 A. M. D a n a m a e v. Նշվ. աշխ., էջ 275, ծանոթ. 71 (մեջբերված տվյալը ըստ A. J. S a c h s, T. G. P i n c h e s, J. N. S t r a s s m a i e r. Late Babylonian Astronomical and Related Texts. Providence, 1965):

32 Թոփչյան Արծրունի և Անանյան. Պատմություն Արծրունյաց տան. I, 2. Երևան, 1985, էջ 68: Խորենացին և հայ այլ պատմագիրներ հիշում են «Արտաշես» անունով մի շարք Պարսկաստանի Թագավորների, որոնց պատկանելությունը վիճելի է: Բայց Թոփչյան ներկայացրել է հունահռոմեական աղբյուրներին համապատասխանող Աքեմենյանների համարյա լրիվ արքայացանկը, որում «Արտաքսերքսես» անունով Թագավորներին համապատասխանում է «Արտաշես» անունը:

Այստեղ *Խորենացու Առաջին Արտաշեսին վերաբերող հիմնական տվյալները* դրվագ առ դրվագ համեմատվեցին *Դարեհ III-ի հետ*: Ընդհանրություններն այնպիսի եղակի ու առանձնահատուկ բնույթ ունեն, որ դժվար է սեսնել այս կերպարների նույնությունը ժխտող որևէ լուրջ կովան: Միանգամայն ակնհայտ է, որ *Խորենացու Առաջին Արտաշեսը* կրում է *Դարեհ III* Կոգոմանոսի կենսագրության բոլոր հիմնական դրվագները, որին կցված են Կյուրոս Մեծին վերաբերող որոշ գործեր: Սա նշանակում է, որ այս կերպարը Պատմահայրը ստեղծել է գլխավորապես աքեմենյան շրջանին վերաբերող տվյալներով: Ակնհայտ է, որ անմիջապես Առաջին Արտաշեսին վերաբերող պատմությունը համապատասխանում է հունահռոմեական հանրահայտ աղբյուրներում (Ռուփոս, Արիանոս, Պլուտարքոս, Դիոդորոս, Կեղծ-Կալիսթենես) Մակեդոնացու արշավանքին վերաբերող պատմություններում *Դարեհ Վերջինին վերաբերող հիմնական տվյալների հետ*: Այս առումով հատկանշական է Արիանոսը, որը *Դարեհի վախճանի մասին հավորդելուց հետո*, մեկ առտնձին գլխում կատարում է նրա գործունեության ամփոփում, որն իր սեղմ բնույթով և հիմնական դրվագներով (պատերազմ արևմուտքում և «ծովափնյա շրջաններում», Ջախջախիչ սյարտություն, «մեծ զորքի կործանում», փոխուստ, դառը ճակատագիր, մահ)³³, բավականին նման է *Խորենացու Առաջին Արտաշեսի պատմության հակիրճ շարադրանքին*: Սա դեռևս չի նշանակում, որ այս դեպքում *Խորենացու համար* որպես գլխավոր աղբյուր է ծառայել *Արիանոսը*: Առաջին Արտաշեսի կերպարի բացահայտմամբ, դրա ստեղծման հիմք հանդիսացած աղբյուրների հարցը դեռևս չի պարզվում, բայց դա դառնում է շատ ավելի որոշակի ու լուծելի խնդիր: Սա այլ քննարկման հարց է, բայց դրանում արդեն առաջնային կարևորություն է ստանում այն, որ Առաջին Արտաշեսի կերպարի բացահայտմամբ միանգամայն ակնհայտ է դառնում աղբյուրների օգտագործման *Խորենացու գլխավոր սկզբունքը*: Նա իր կերպարները ստեղծել և ընդհանրապես իր Պատմությունը կառուցել է ոչ թե տվյալների շաղախով կամ խառնուրդով, այլ դրանց շարվածքով: Պատմահայրն իր ձեռքի տակ եղած տվյալները որոշ հատվածներում «չարել» է ոչ ճիշտ դասավորությամբ, բայց հանճարեղ հնարամտությամբ և բարձրակարգ պատմաբանին պատշաճ մոտեցմամբ, դրանք իր պատկերացրած ձևով հարմարեցրել է առանց էական ձևախեղումների: Այդպիսով *Խորենացին մեծապես պահպանել է իր ձեռքի տակ եղած տվյալների բնագրային տեսքն ու սլատմադիտական արժեքը*, ինչը և հնարավորություն է տալիս գտնել նրա Պատմության վերջնական բանալին: *Խորենացու այս մոտեցումը լավագույնս սահմանել է Գ. Սարգսյանը*. «Պեսք է ընդդեմ, սակայն, այն հմտությունը, որով *Խորենացին* տարել է իր մշակումը, փոփոխությունները մտցնելով միայն ամենաանհրաժեշտ դեպքում և կատարելով այդ փոփոխությունները նյութի սահմանափակ, հնարավորին չափ փոքր հատվածներում ու այսպիսով անաղարտ սլահելով իրեն հասած նյութի մեծադույն մասը»³⁴: Սա *Խորենացու «աշխատանքի մեթոդիկայի» հիմ-*

33 Արիանոս, III, 22, էջ 116-117:

34 Գ. Սարգսյան. Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» ժամանակագրական համակարգը, էջ 136:

նաբանաձևն է, որի միջոցով հիմնականում կարելի է բացահայտել նրա աղբյուրներն ու ընդհանրապես վերծանել նրա Պատմությունը:

Ամբողջությամբ սույն քննարկումը, կարելի է վստահորեն ասել, որ Խորենացու Առաջին Արտաշեսի կերպարը կազմված է պատմական հավաստի ավյալների համատեղումից, այլ ոչ թե սոսկ դրանց կամ ժողովրդական հիշողությունների արձագանք է: Այս կերպարի հիմնական մարմնավորողը պատմության մեջ իսկապես գոյություն է ունեցել, որին վերագրված հիմնական դործերը թե՛ առանցքային ընդհանրություններով և թե՛ եզակի, յուրահատուկ մանրամասներով համապատասխանում է միանգամայն որոշակի պատմական դեմքի՝ նախապես Հայաստանի տիրակալ, հետագայում Աքեմենյան տերության արքայից արքա Դարեհ III Կոդոմանոսին:

ЕЩЕ РАЗ О ПЕРВОМ АРТАШЕСЕ МОВСЕСА ХОРЕНАЦИ

МУРАД ОГАНЯН

Р е з ю м е

Многие исследователи, считая образ Первого Арташеса у Мовсеса Хоренаци откликом на народные предания, видели в нем дела Митридата VI Понтийского и Тиграна Великого. Но этот образ создан на совместимых достоверных исторических данных. Существенная часть этих данных – и основной общностью, и редкими своеобразными деталями – полностью приводит к определенному историческому лицу – властителю Армении, затем царю-царей Ахеменидской державы – Дарию III Кодоману.

ONCE MORE ABOUT THE FIRST ARTASHES OF MOVSES KHORENATSI

MURAD OHANYAN

S u m m a r y

Many researchers consider the image of the First Artashes of Movses Khorenatsi to be an echo of historical and national memoirs. Specifically, they see it as reflecting Mithradates VI and Tigranes The Great. But the image, which I have briefly addressed in the past, is rooted in historical data. That data, generally, as well as in its specific and unique details, reveals the image to be that of a historical person, – previously the satrap of Armenia, and then the king of the kings of Achaemenian Empire - Darius III Codommanus.